№ 246 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6
1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6 № 246

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան .	6 դոլլար
Եւրոպա » .	30 ֆրանկ
Պարսկաստան » .	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել . . .	40 կոպ.

Հանգուցեալ ՇԽԱԼԻԻ այրին, եղբայրը և որդին յայտնում են ի գիտութիւն հանգուցեալի ընկերների և հասարակութեան, որ նոյեմբերի 9-ին, կիրակի, Խօջիվանքի գերեզմանատանը պատարագից յետոյ տեղի կունենայ
ՇԽԱԼԻ-ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶԵԱՆՑԻ
դամբարանի վրա տապանաքար կանգնեցնելու հանդէսը:
Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը $11^1/_2$-ին:
Հանդէսի կարգադրիչ՝ Մարտիրոս Գրիգորեան
(հ. կ.) 2—1

Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին,
հանգուցեալ բժշկապետ
ԵԳՕՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԻ
մահվան քառասունօրեակին
Վանքի մայր-եկեղեցում պատարագից յետոյ տեղի կունենայ հոգեհանգիստ: Պատարագի սկիզբն է առաւօտեան $10^1/_2$ ժամին, հոգեհանգիստը՝ 12-ին:
Որի համար խորին վշտով յայտնում են հանգուցեալի այրին և եղբայրները:
(չ. հ.) 2—2

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, նոյեմբերի 6-ին
կը կայանայ
Գալա-Ներկայացում
Մասնակցութեամբ հայ դերասանների լաւագոյն ույժերի:
Կը ներկայացվի
Գ. Սունդուկեանի յայտնի կօմեդիան
ՊԷՊՕ
3 արարուածով
ՎԵՐՋԸ
M-lle ՖԻՖԻ
Դրամա 1 արար., գր. Մօպասանի
Մասնակցում են. տ. տ. Արաքս, Գուլազեան, Մայսուրեան, Մելիքեան, Վարդուհի, Յասմիկ, պ. պ. Աւետեան, Զարիֆեան, Թաշճեան, Թօրոսեան, Մամիկոնեան, Միրագեան, Սանթուրճեան, Սեւումեան, Տէր-Դաւթեան, Վանչեր և ուրիշները:
Սկիզբը երեկոյեան ուղիղ ժամը 8-ին:
Ռեժիսսեօր՝ Ս. Քափանակեան

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

I

Վերջին երեք տարիներում մենք վերաբացեցինք մեր ուսումնարանները, մեր փակված ընկերութիւնները և հիմնեցինք նորերը:

Մեր արածը դեռ շատ չէ և ըստ էութեան դեռ անբաւարար է. բայց նա սկիզբն է ընդարձակ կուլտուրական գործունէութեան:

Եւ անշուշտ, եթէ մեր հասարակական բոլոր ույժերը միանան սիստեմական աշխատանքի համար, մենք կարող կը լինենք մի քանի տարիների ընթացքում ծածկել մեր երկիրը կրթական հաստատութիւնների և հասարակական ձեռնարկութիւնների մի խիտ ցանցով:

Նոյնը պէտք է ասել և Թիւրքահայերի վերաբերութեամբ:

Օսմանեան սահմանադրութիւնը վերադարձրեց նրանց խլված իրաւունքները և ընդարձակեց կուլտուրական գործունէութեան ասպարէզը: Բացվեցին պապանձված լեզուները, ույժ ստացաւ մամուլը և հերթական դարձաւ կուլտուրական ընդարձակ գործունէութեան ծրագիրների մշակման հարցը:

Եւ անկասկած՝ մենք շուտով կը տեսնենք մի շարք փորձեր այդ ուղղութեամբ:

Թիւրքահայերի փակված կուլտուրական հաստատութիւններից մէկն էր Միացեալ Ընկերութիւնը, որը այնքան մեծ դեր կատարեց Թիւրքահայերի կեանքում և որի վրա վերաբերմամբ մենք մտադիր ենք ներկայ յօդուածում կանգ առնել:

Միացեալ Ընկերութիւնը հարթել էր իր համար գործունէութեան մեծ ճանապարհ և շահել էր լայն ժողովրդականութիւն հայաբնակ բոլոր տեղերում: Միացեալ Ընկերութեան հմայքը մինչև այժմ ուժեղ և կենդանի է Թիւրքահայի յիշողութեան մէջ:

Եւ անտարակոյս՝ ներկայումս, երբ Թիւրքիայում հնարաւորութիւն է ստեղծված զարգացնելու կուլտուրական ձեռնարկութիւնները երկրի մէջ, նորից կարող է մեծ թափով և լայն չափով Միացեալ Ընկերութիւնը վերսկսել և վերահաստատել իր գործունէութիւնը, տալով նրան նոր ճիւղաւորութիւններ:

Եթէ նոր ընկերութիւնները դեռ պէտք է հող պատրաստեն իրանց համար և ժողովրդականութիւն շահեն, Միացեալ Ընկերութիւնը կարող է առանց յանձնարարականների ասպարէզ իջնել և անմիջապէս գործի զարկել:

Այո, այդ կարող է նա անել: Կարող է սակայն այն դէպքում, եթէ գործող ույժերը կը միանան եռանդուն աշխատանքի համար, եթէ հայ հասարակութիւնը կը տայ նիւթական միջոցներ:

Հայ հասարակութիւնը չը պէտք է մոռանայ, որ արհաւիրքի ծանր և ճընշող օրերում ունեցած կորուստները կարող են փոքր ի շատէ հաւասարակշռվել այն ժամանակ, երբ մենք խորտակված կեանքի վերականգնման և վերահաստատման համար գործ կը դնենք ուժեղ միջոցներ և կը ձեռնարկենք անխոնջ աշխատութեան:

Որքան էլ տնտեսապէս ընկճված և քայքայված լինի ժողովուրդը, բայց և այնպէս նա պէտք է կարողանայ իր միջոցներից հաւաքական եղանակով գումարներ կազմել, որպէս զի նրա կրթական և միւս կուլտուրական հիմնարկութիւնները սկսեն գործել և հարթել ուղիներ նոյն կեանքի վերաշինութեան և ընդարձակ զարգացման համար:

Պէտք է աջակցել կուլտուրական հիմնարկութիւնների վերահաստատմանը և նորերի բացմանը, իսկ նրանց թւում ամենաառաջին գործերից մէկը պէտք է լինի Միացեալ Ընկերութեան օգտաւէտ և բեղմնաւոր գործունէութեան վերահաստատումը:

Ինչպէս անցեալում, այնպէս և այժմ հասարակութիւնը պէտք է աջակցութիւն ցոյց տայ այդ ընկերութեան, տալով իր օժանդակութիւնները և նպաստները:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 3 նոյեմբերի

Ինչպէս հաղորդում են, այն գնացքը, որով ուղևորվում էր Փոխարքան Պետերբուրգից դէպի Կովկաս, ճանապարհին բաղդաւոր կերպով ազատվեց խորտակումից: Կլին—Ռեչետնիկօվ կայարանների շրջանում րէլսերից մէկը եղել է կտրված երկու արշին տարածութեամբ, որը մեքենավարը կարողացել է ժամանակին նկատել և գնացքը կանգնեցնել:

Լուր է պտտում, որ ներքին գործերի մինիստրութիւնը որոշել է գրաւել գիւղացիների և բանւորների շրջաններում տարածված թերթերի այն համարները, ուր տպագրված է Միլիւկօվի արտասանած վերջին ճառը Դումայում ագրարային հարցի մասին, միևնոյն ժամանակ արգելել այդ ճառի տարածումը:

Սպասում են, որ Պ. Ա. Ստօլիպինը շուտով կը նշանակվի պետական պաշտպանութեան խորհրդի նախագահի պաշտօնում, իսկ ներքին գործերի մինիստր կը նշանակվի Մակարօվը:

Վճռված է առաջիկայ դեկտեմբերին հոգեբանների համագումար հրաւիրել: («Кс.»)

—

Թաւրիզից ստացված մասնաւոր նամակները յայտնում են, որ Մուժամբար գիւղը ենթարկվել է կառավարչական 1200 ձիաւորների յարձակման, որոնք սպանել են հայերից 12 հոգի, աւերել են գիւղը և թնդանօթի կապել հայոց եկեղեցին:

—

Հոկտ. 29-ին Սամսոնում գտնվող ղարաջադաղցի ձիաւորները Թաւրիզից վեց վերստ հեռաւորութեան վրա կողոպտեցին հայաբնակ Ջիմգուշքար գիւղը, որ պատկանում է ռուսահպատակ Ադիլ-խան Կարաբային: Երկու կողմից կան սպանվածներ և վիրաւորվածներ: Կարաբայի նիւթական վնասը հասնում է 75,000 րուբլու:

Գեներալ-Նահանգապետ Էյն-ուդ-Դօվլէն եղածի պատասխանատուութիւնը իր վրա չընդունեց, կարգ ու կանոնը վերահաստատելու համար անհրաժեշտ ույժեր չունենալու պատճառով:

Ռուսաց հաւատարմատարը և անգլիական դեսպանը պարսից կառավարութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրեցին կատարված վայրագութեան վրա և նրա վրա շահի զօրքերի այդօրինակ գործողութիւնների պատասխանատուութիւնը: («Հ. Գ.»)

—

«Нов. Русь» լրագրի ասելով, գընդապետ Լեախովը իր կօզակների բրիգադայով Թաւրիզի յեղափոխականների դէմ ուղևորվելուց առաջ, Թեհրանում նա դիմել է կօզակներին մի հրաման-կոչով:

Այդ հրամանի մէջ Լեախովը մատնանշում է, որ սահմանադրութիւնը կը կրճատէ բրիգադայի իրաւունքները և որ այդ պատճառով հարկաւոր է, որ կօզակները կռիւ մղեն նրա դէմ «մինչև արեան վերջին կաթիլը»:

«Իմացէք,—գրում է ի միջի այլոց Լեախովը,—որ դուք, որպէս յաղթողներ, կը պարգևատրվէք շքանշաններով, դրամական նուէրներով և ինչպէս ռուսաց, այնպէս և պարսկական միապետների ողորմածութեամբ: Իսկ որքան հարստութիւն է պարունակում իր մէջ Թաւրիզը... Այդ բոլորը ձեզ կը տրվի: Յիշեցէք այդ և կռուեցէք առիւծների նման: Կամ դուք, կամ սահմանադրութիւնը»:

Առաջ բերելով այս կտորը, հասկանալի համարելով այն բոլոր շարժա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լօնդօն, 7 նոյեմբեր (ն. տ.)

Անցեալ նամակովս խոստացեր էի անգամ մը ևս անդրադառնալ Վիլհէլմ կայսեր ակնարկած «Անգլիան մինչև հող սողոնցնելու» խնդրին, և ընդարձակօրէն պարզել զայն:

Սակայն, այդ ծրագրին մանրամասնութեանց մտնելէ առաջ, այստեղ արտագրեմ կայսեր խօսական բառերը, ուղղուած այս համբաւաւոր տեսակցութիւնը ունեցող դիւանագէտին, որ այնքան զայրոյթ յառաջացուց մասնաւորաբար ֆրանսական մամուլին մէջ:

«Յիշեցի,—կը յարէ ան,—իմ ճառերս, որոնցմով արտայայտած եմ, որքան որ վեհապետ մը կարող է ընել, իմ բարեացակամութիւնս: Բայց քանի որ գործքերը բառերէ աւելի բարձրաձայն կը խօսին, թոյլ տուէք ինձ յիշել ձեզ գործքերս: Անգլիոյ մէջ ընդհանուր հաւատքը այն է, թէ Հար. Ափրիկէի պատերազմի ընթացքին Գերմանիա թշնամական էր, դառնօրէն թըշնամական: Թշնամական էր մամուլը, թշնամական էր նաև ժողովրդական կարծիքը: Բայց ինչ կըսէք պաշտօնական Գերմանիոյ մասին: Թող իմ քննադատներս հարցնեն ինքզինքնուն թէ՝ ինչ բան յանկարծական կասեցման, յիրաւի, բացարձակ քայքայման մը բերաւ բօէր պատուիրակներուն Եւրոպա այցելութիւնը, որով եւրոպական միջամտութիւն ձեռք բերել կը ձգտէին: Փառաւոր ընդունելութիւն գտան Հօլանդա, Ֆրանսա հոգեզմայլ բարի-գալուստ մը շնորհեց իրենց. ուզեցին Բերլին գալ, ուր ժողովուրդը իրենց ճանապարհները ծաղիկներ պիտի սփռէր: Բայց երբ խնդրեցին ինձմէ ընդունիլ զիրենք, մերժեցի: Յուզումը անմիջապէս իջաւ, և պատուիրակութիւնը ձեռնունայն վերադարձաւ: Կը հարցնեմ ձեզ, գաղտնի թշնամիի մը արարքն էր այդ:

«Կրկին, երբ պայքարը գագաթնակէտին հասած էր, գերման կառավարութիւնը հրաւէր ստացաւ կառավարութիւններէն՝ պահանջել Անգլիայէ, որ վերջ դնէ պատերազմին: Ժամանակը եկած է,—կըսէին անոնք,—ոչ միայն բօէրական հանրապետութիւնները փրկելու, այլ և Անգլիան մինչև հող սողոնցնելու: Ի՞նչ եղաւ իմ պատասխանս: Ըսի որ, Գերմանիա միացեալ եւրոպական գործունէութեան մը մասնակից չըլլալէ զատ՝ ճնշում դնելու Անգլիոյ վրայ և իր անկումը յառաջ բերելու, նա միշտ հեռու պիտի մնայ այնպիսի քաղաքականութիւններէ՝ զորս Անգլիոյ նման ծովային ույժի մը հետ բարդութիւններ կը ստեղծեն: Ապագայ սերունդը օր մը պիտի կարդայ ճիշդ բառերը հեռագրիս,—այժմ Ուինդզըր Քասըլի (Արքունի պալատան) արխիւներուն մէջ—որու մէջ յայտնած եմ այն օրուայ վեհապետին՝ իմ պետութեանց տուած պատասխանս, որոնք իր անկումը կը ծրագրէին: Անգլիացիք, որ հիմա զիս կը նախատեն խօսքերուս տարակուսելով, թող գիտնան թէ ինչ էին իմ գործքերս՝ իրենց թշնամական օրերուն»...

Այսքանը՝ կայսեր վերագրուած խօսքերու մասին:

Այժմ տեսնենք թէ ինչ եղանակով «սողոնցնելու» կը բաղձային Անգլիան՝ իր ճակատագրական օրերուն: Ու այս ընելու համար, լաւագոյնն է արտատպել հոս «Daily Graphic» թերթին մէջ լոյս ընծայուած յօդուածի մը կարևոր մասերը, գրուած՝ խնդրին մօտէն ծանօթ անձնաւորութեան մը կողմէ:

«Այս դաշնակցութեան ծրագիրը ծագում առաւ,—կը գրէ յօդուածագիրը,—հականգլիական պատերազմասէր կուսակիցներէն և մանրամասն ձևաւորուեցաւ կոմս Մուրավիեվի և զօրավար Վաննօվսկիի կողմէ: Իր հիմնական գաղափարն էր՝ պահպանել բօէրներու զինուորական ույժը Հար. Ափրիկէ՝ իբրև էական կէտ մը եւրոպական ույժի հաւասարակշռութեան պահպանման: Դաշնակցութիւն մը պիտի կազմուէր Ռուսաստանի, Ֆրանսայի, Գերմանիոյ և Սպանիոյ միջև և առաջին առթիւ պահանջ պիտի դրուէր Անգլիոյ վրայ՝ գործը յանձնելու Հաագայի դաշինքին: Եթէ այս քայլը վիժէր, բռնացում պիտի գործադրուէր:

«Ֆրանսա և Գերմանիա նաւային ցոյց մը պիտի կազմէին սպանիական եզերքները, ուրկէ կարելի էր բրիտանական ծովային հաղորդակցութիւնները դիւրաւ կտրել, մինչ Ռուսաստան Հնդկաստանի պիտի սպառնար՝ Հերաթէն: Այս թանկագին ծրագիրը գըրպանը, կոմս Մուրավիեվ հոկտեմբերի սկիզբները Սան-Սեբաստիան գնաց՝ գործը սէնոր Սիլվէլայի նկատողութեան յանձնելու: Անկէ անցաւ Պարիզ, ուր խնդիրը վիճեցաւ նախ Դելկասէի և ապա դր. Լէյդսի հետ: Սէնոր Սիլվէլա համակրական էր, այլ Դելկասէ վարանոտ, ու ժամանակ խնդրեց: Կոմս Մուրավիեվ այնքան փութկոտ էր, որ ձևական ապահովութիւն մը տուաւ դր. Լէյդսի թէ՝ «Ֆրանսա և Ռուսաստան պիտի չթողուին որ Անգլիա ազատօրէն իրեն կցէ Տրանսվալն ու Օրանժը»: Քանի մը օր վերջ, ի մեծ անհաճութիւն իրեն, Դելկասէ պատասխանեց թէ՝ ֆրանսական կառավարութիւնը բարեկամական դիտողութենէ մը անդին չի կրնար անցնիլ Մեծն Բրիտանիոյ դէմ:

«Կոմս Մուրավիեվ չյուսահատեցաւ և նոյեմբերին սկիզբները իր ծրագիրը տարաւ Բերլին: Հոս, առանց վարանման, մերժուեցաւ այդ: Ասով, սակայն, չվերջացաւ պատմութիւնը: Երբ կօնտինէնտը առաւել ևս պրօ-բօէր դարձաւ, Մուրավիեվ և Վաննօվսկի կրկին յուսադրուեցան, և միւս պետութիւնները միակ իրենց առանձին ընթացքով դէպի գործ մղելու գաղափարն յղացան: Հետևաբար զունդեր բերուեցան Անդրկասպեան նահանգները և առաւել քան 50,000 հոգի և 150 թնդանօթ Ասխաբադի վրայով Թիֆլիսէն Քուշկա՝ աֆղանական սահմանագլուխը ղրկուեցան, ուր զօրեղ ամրոցներ կառուցուած էին և մեծ քանակութեամբ երկաթուղային նիւթեր մթերուած: Մինչև 1900 թ. յունվարի վերջը արդէն չորս մարտադնդեր, իւրաքանչիւրը բաղկացած 40,000 հոգիէ, համեմատական հեծեալներով, հաւաքուած էին Անդրկասպիա:

«Բերլինի և Պարիզի հետ բանակցութիւնները կրկին բացուեցան: Այս անգամ Պարիզ շատ աւելի սիրայօժար կերևէր, և նոյնիսկ կըսուէր թէ Գերմանիա ևս պատրաստ էր ընդունիլ ծրագիրը՝ որոշ պայմաններով: Այդ ծրագիրը իրապէս վիժեցաւ, ոչ թէ որովհետև Ֆրանսա և Գերմանիա չէին կրնար համաձայնիլ, այլ շնորհիւ Մեծն Բրիտանիոյ ամուր դիրքին և լօրդ Ռօբէրտսի յաղթանակներուն և, մասնաւորաբար, շնորհիւ չինական խլրտումի ծագման: Մարտի սկիզբներն էր, մինչ տակաւին դաշնակցութեան բանակցութիւնները կը շարունակուէին, երբ Չինաստանի մայր-կայսրուհին իր ձեռնոցը նետեց եւրոպական պետութեանց: Սա փրկեց Եւրոպայի խաղաղութիւնը»:

Այս մանրակրկիտ քննութենէն պիտի նկատէ ընթերցողը, որ, կայսեր խօսքերուն նման, այնքան ալ «անշահախնդիր» բարեկամութեան սիրահար մը չէր Գերմանիա՝ դէպի Անգլիա, և, եթէ իր առաջադրած պայմանները ընդունուէին, շատ հաւանական է, որ ինքն ալ ընդունէր դաշնակցութեան ծրագիրը:

Թողլով այս բոլորը մէկ կողմ, ինչ եղանակով հաշտեցնենք Վիլհէլմ կայսեր վերջին խօսքերը և 1896 յունվարին իր՝ նախագահ Կրուգէրի ուղղած սա հեռագիրը. «Անկեղծօրէն կը շնորհաւորեմ ձեզ, որ, ձեր ժողովրդին ջանքերով և առանց բարեկամական պետութեանց աջակցութեան, ձեր կորովի գործունէութեամբ յաջողեցաք զինեալ զունդերու դէմ, որոնք ձեր երկիրը արշաւեցին որպէս խաղաղութիւնը խանգարողներ, ու այսպէսով կարողացաք խաղաղութիւն վերահաստատել և երկրին անկախութիւնը պահպանել՝ դուրսէն յարձակումներուն դէմ»:

Վիլհէլմի անհատական հեռագիրն է սա, և այն պահուն, երբ քաջարի բօէրներ իրենց առաջին յաղթանակները կը տանէին բրիտանական առիւծին վրայ:

Կամ այն՝ որ երկու երեսով կը շարժի և իր էութեամբ կեղծիք մըն է Վիլհէլմ կայսր, և կամ իր խօսածներուն և գրածներուն պատասխանատուութիւնը չունի, այնքան որ րոպէական բնազդի ներքև կը գործէ:

«Վիլհէլմ լաւ կը խօսի,—ըսած է մէկը,—բայց շատ կը խօսի և խիստ փութկոտութեամբ կը խօսի», որ շատ ուղիղ է և որու պատճառով պարբերաբար կըստեղծէ այսպիսի անհաճոյ դէպքեր:

Մինաս Ցոլակ

ութիւնները, որոնցից զրկված գնդապետ Լեախովը խոստանում է շահի ողորմածութիւնը, «P. B.» լրագիրը միանգամայն իրաւացի կերպով հարց է տալիս. «Բայց ինչ հիման վրա նա (Լեախովը) կանխապէս երաշխաւորում է ճնշողներին նաև ռուս կառավարութեան ողորմածութիւնն ու բարեացակամութիւնը»:

—

Թաւրիզ, 3 նոյեմբերի

Զինուորական նուագածութեամբ հանդիսաւոր կերպով յանձնվեց Սաթթար-խանին երիտասարդ-թիւրքերի կողմից ուղարկված համակրական նամակն ու նշանակը, և այն շքանշանը, որ նուիրել էր սուլթանը քաջութեան համար: («Kc.»)

—

Թաւրիզ, 4 նոյեմբերի

Յեղափոխականները կտրեցին Էյն-ուդ-Դօվլէին ամեն տեսակ հաղորդակցութիւնից: («Հ. Գ.»)

—

Թեհրան, 4 նոյեմբերի

Ռուսաց դեսպան Հարտվիգը մեկնեց Պետերբուրգ: («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 4 նոյեմբերի

Օգտվելով Թեհրանի կօզակների գալուստից, Էյն-ուդ-Դօվլէն արձակեց իր ձիաւորների մի մասը:

Յեղափոխականներն այսօր առաջաւոր խմբեր ուղարկեցին Վասբինջ:

Սաթթար-խանը շարունակ օժանդակ ույժեր է ստանում: («Հ. Գ.»)

—

Բեռլին, 30 հոկտեմբերի

Արմատական մամուլը, խօսելով ռէյխստագի վիճաբանութիւնների արդիւնքի մասին, միահամուռ կերպով դատապարտում է ազատ մտածողների և ազգային-լիբերալների վերաբերմունքը, կշտամբելով նրանց, որ նրանք զուրկ են նախաձեռնութիւնից և երկչոտ՝ եռանդուն քայլեր անելում: Այդ ամենը այն հետևանքը ունեցաւ, որ գեղեցիկ ֆրազներից բացի ռէյխստագը ոչինչ չարեց: Դժգոհ են ռէյխստագից մինչև իսկ ամենաչափաւոր թերթերը:

Գաւառներում վիճաբանութիւնների ապարդիւն անցնելը աւելի մեծ գայրոյթ է առաջացրել, քան նոյնիսկ կայսրի ինտերվիւի հրատարակումը:

Ազգային-լիբերալների գաւառական մամուլը լիովին հրաժարվում է պարլամենտական իր ներկայացուցիչներից, յայտնելով որ նա ոչ մի առնչութիւն չէ կարող ունենալ այն պարոնների հետ, որոնք հիւսվում են կանցլեր Բիւլօվի պոչից՝ նրա սեղանին-նուիրաբերելով երկրի շահերը:

Հասարակութիւնը, միտինգներում ընդունած մի շարք բողոքի բանաձևերով, պահանջում է իշխան Բիւլօվի հրաժարականը, որը չը կամեցաւ երաշխաւորութիւններ տալ:

Լրագիրների կծու քննադատութիւններն ու ընտրողների յուզված տրամադրութիւնը շփոթութիւն է առաջ բերել պարլամենտական շրջաններում:

Ազատ մտածողները, որոնք կանցլերին վստահութիւն էին յայտնել, իրանց դիրքը փրկելու համար շտապում են պատրաստել մի օրինագիծ մինիստրների պատասխանատուութեան մասին: Հազիւ թէ, սակայն, այդ մանեօվրը բարձրացնի նրանց ընկած վարկը, մանաւանդ որ պահպանողականները աշխատում են խաչ քաշել կայսրի միջադէպի վրա:

Ազգայնականութեան տրամադրութիւնը ազդել է նաև կառավարչական շրջանների վրա: Ասում են, որ իշ. Բիւլօվը վերջնականապէս որոշել է հրաժարական տալ: Հրաժարականը տեղի կունենայ մինչև նոր տարի: Մինիստրների գաղտնի խորհրդակցութեան մէջ երէկ քննվել է այդ հարցը, և դրա հետ է շաղկապվում այն, որ իշ. Բիւլօվը մօտ օրերս պիտի ներկայանայ կայսրին, ծանօթացնի նրան իրերի իսկական դրութեան հետ: Հաւանական յաջորդ են համարվում Բէտման Գօլվէգը և Ռէյնբաբենը:

«Leipziger Tageblatt»-ը հաղորդում է, որ Վիլհէլմ կայսրը Դօնաուշինգենում խիստ հետաքրքրութեամբ հետևում էր պարլամենտական վիճաբանութիւններին, ստանալով նիստերի ստենօգրաֆիական արձանագրութիւնները հեռագրով: («P. C.»)

—

Բեռլին, 4 նոյեմբերի

«Norddeutche Al. Zeit.»-ը իր արտակարգ յաւելուածում հաղորդում է, որ Բիւլօվը, հէնց որ Պոտսդամից վերադարձաւ, իսկոյն և եթ դռնփակ խորհրդակցութեան հրաւիրեց պրուսական մինիստրութեան անդամներին և զեկուցեց կայսրին արած զեկուցման հետևանքի մասին: Դրանից յետոյ Բիւլօվը ընդունեց ռէյխստագի նախագահին և նրա հետ ունեցաւ երկարատև խօսակցութիւն: Միաժամանակ մինիստր Բէտման-Գօլվէգը Բիւլօվի յանձնարարութեամբ համապատասխան հաղորդագրութիւն արեց դաշնակցական խորհրդի անդամներին: («Հ. Գ.»)

—

Բեռլին, 4 նոյեմբերի

Վօլֆի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, Բիւլօվը կը մընայ իր պաշտօնում: («Հ. Գ.»)

—

Դրեզդէն, 4 նոյեմբերի

Սաքսօնական երկրորդ պալատում քննվում էր հարցապնդումը Վիլհէլմ կայսրի յայտնի խօսակցութեան առիթով: Առաջ բերելով ազատամիտների հարցապնդումը, Գիւնտէր յայտնեց, որ ռէյխստագում ասպարէզ գալը ոչինչ հետևանքներ չունեցաւ: Հռետորը պահանջում էր սաքսօնական կառավարութիւնից, որ արտայայտէր իր ազդեցութիւնը դաշնակցական խորհրդում: Մինիստր-նախագահ կոմս Գօգէնտալ յայտնեց, որ հռետորը չափազանցրած կարծիք ունի սաքսօնական կառավարութեան ույժերի մասին. կառավարութիւնը կարող է վճռական առաջարկութիւն անել, բայց կասկածելի է, թէ ներկայ բոպէն արդեօք յարմա՞ր է ակտիվ գործողութիւնների համար. դաշնակցական խորհրդի արտաքին գործերին վերաբերեալ յանձնաժողովի վերջին նիստում Բիւլօվ հաղորդագրութիւն արեց Գերմանիայի արտաքին քաղաքականութեան մասին. յայտարարութեան վերջին տարիները վստահական բնաւորութիւն ունէին. թէ Բիւլօվ կը մնայ ղեկավարի պաշտօնում, դա բացառապէս պարտքի և հայրենասիրութեան զգացմունքից է լինելու: Վերջը Գօգէնտալ յայտնեց. «Մենք համոզվեցինք Բեռլինում, որ յանձնաժողովը միայն այն ժամանակ իր նպատակին ծառայած կը լինի, եթէ աւելի յաճախ կը գումարվի»: Սաքսօնիան այդ պատճառով (խնդրում էր ?) նախագահից կրճատել ընդմիջումները յանձնաժողովի նիստերի միջև: Գօգէնտալի յայտարարութիւնից յետոյ հարցապնդողները հրաժարվեցին հարցապնդումից: («Հ. Գ.»)

—

Բեռլին, 4 նոյեմբերի

«Vossiche Zeit.»-ին հաղորդում են Վիէննայից, որ Աւստրո-Ունգարիան պատերազմական պատրաստութիւններ է տեսնում Բօսնիայի և Չերնոգորիայի դէմ: Իբրև այդ ձեռնարկութիւնների առիթ, մատնանշում են այն հանգամանքը, որ սահմանի մօտ ապրող ազգաբնակութիւնը, նկատի առնելով շարունակվող սպառազինումը, առանձնապէս Սերբիայում տեղի ունեցող, շատ մեծ անհանգստութեան մէջ ընկաւ և աղմուկ բարձրացրեց: Ազգաբնակութիւնը յամառութեամբ շարունակ զինուորական պաշտպանութիւն է պահանջում: («Հ. Գ.»)

—

Վիէննա, 3 նոյեմբերի

«Zeit» լրագիրը տպել է Բեռլինի թիւրքական դեսպան Օսման-Նիզամ-փաշայի հետ խօսակցութիւնը, որ յայտնել է, թէ Թիւրքիան չի կապի պատերազմական պայմանագիր Սերբիայի հետ, որովհետև դա կուժեղացնէր պատերազմի շանսերը: Թիւրքիան կարող է այժմ պատերազմի դաշտը դուրս բերել 300,000 մարդ, բայց պատերազմ չէ ցանկանում, որովհետև պատերազմը 10 տարով կը կանգնեցնէր երկրի ներքին զարգացումը: Սակայն Սերբիայի հետ յարաբերութիւնները գեղեցիկ են: Թիւրքերը ցանկանում են սերբերին ամեն տեսակ լաւութիւն և ուրախ կը լինեն, եթէ Սերբիան հողային վարձատրութիւն ստանայ Բօսնիան միացնելու համար, միայն, ի հարկէ, ոչ ի հաշիւ Թիւրքիայի: Թիւրք-բուլղարական բանակցութիւնները փոխարկվեցին վէճի ֆինանսական հարցերի մասին, և այդ պատճառով պէտք է գոհացուցիչ հետևանքների բերեն:

«Reich. Anz.» լրագրում տպված է, որ ունկնդրութեան ժամանակ զեկուցին կայսրին ժողովրդի այն տրամադրութեան մասին, որ կապ ունի «Daily Telegr.» լրագրում երևցած յօդուածի հետ, և նա բացատրեց իր գործունէութեան եղանակի շարժառիթները ռէյխստագում տեղի ունեցած վիճաբանութիւնների ժամանակ: Կայսրը շատ լրջութեամբ լսեց կանցլերի բացատրութիւնները և ապա իր կամքը յայտնեց այս մտքով. ուշադրութիւն չը դարձնելով չափազանցութիւնների վրա, որոնց նա անարդար է համարում, կայսրը իր ամենագլխաւոր նպատակն է համարում ապահովել կայսերական քաղաքականութեան կայունութիւնը՝ պահպանելով սահմանադրութեան որոշած պատասխանատուութիւնները: Կայսրը հաւանութիւն տուեց ռէյխստագում Բիւլօվի արած յայտարարութիւններին և հաւատացրեց կանցլերին, թէ իր վստահութիւնը անփոփոխելի է դէպի նրան: («Հ. Գ.»)

—

Պոտսդամ, 4 նոյեմբերի

Բիւլօվը նոր պալատը եկաւ ժամը 11-ին կայսրին զեկուցանելու համար. զեկուցումը տևեց մօտ $1^{3}/_{4}$ ժամ:

Բիւլօվը Բեռլին մեկնեց ժամը 12 և 55 րոպէին («Հ. Գ.»)

—

Բեռլին, 4 նոյեմբերի

Պետական կանցլերի զեկուցումը գրաւել է բոլորի մտածողութիւնը: Լրագիրները դեռ երէկվանից առաջնորդողներ նուիրեցին այդ առիթով: («Հ. Գ.»)

—

Բեռլին, 4 նոյեմբերի

Առաւօտեան Եաննովից կամուրջի մօտ տեղի ունեցաւ երկու գնացքների ընդհարում քաղաքային երկաթուղու վրա: Վիրաւորված են 6 հոգի թեթև, իսկ մէկը ծանր:

Արտաքին գործերի կայսերական ատեանում ստորագրված են դաշնագրեր Գերմանիայի և Ունգարիայի միջև, նոյնպէս Գերմանիայի և Ունգարիայի միջև արդիւնաբերական սեփականութեան փոխադարձ պաշտպանութեան մասին: («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 4 նոյեմբերի

Ռէյտէրի գործակալութեանը Պեկինից հաղորդում են, որ արտասահմանեան միսիաները պաշտպանվում են իրանց զինուորական պահակախմբերով: Անգլիայի դեսպանատան պահակախումբը ուժեղացնելու համար Տեանցզինից ուղարկել են յիսուն զինուոր: Կայսրուհու մահը խոր տպաւորութիւն թողեց ժողովրդի վրա: Նշանակված է երեք տարով սուգ: Հին պալատական սովորութիւնները կէտ առ կէտ գործադրվում են: Այն սենեակում, ուր մեռաւ կայսրը, կայսրուհին մնաւ անսպասելի կերպով և մենակութեան մէջ: Մահվան վկաները գտնվում էին նրանից մի քանի քայլ հեռաւորութեան վրա, սակայն դէպի սրբազան անձնաւորուհին ունեցած յարգանքից չը կարողացան մերձենալ: («Հ. Գ.»)

—

Վինդզոր, 4 նոյեմբերի

Եկաւ շվէդական թագաւորական զոյգը: («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 4 նոյեմբերի

Ռէյտէրի գործակալութեանը հաղորդում են Պեկինից, որ պետութեան խնամակալը միանգամայն անկեղծաբար պատրաստ է բարենորոգումներ շնորհել, սակայն նրան ուժեղ մարդ չեն համարում:

Չժիլի գաւառում զօրաբանակները բաժանված են այսպէս. մի դիվիզիան հպատակեցված է գահին, երկու դիվիզիաների հրամանատարն է զինուորական մինիստր Թէլեանը՝ Իւան-Շիկայի կրակոտ հակառակորդը: Նկատի առնելով այդ հանգամանքը, խնամակալ Չունին չէ կարող յենվել Իւան-Շիկայի վրա:

Յեղափոխականների մէջ լուր է տարածված, որ իբր պարագլուխներից մի քանիսը վերադառնում են կրկին Պեկին: («Հ. Գ.»)

—

Վիէննա, 4 նոյեմբերի

«Cor. Bureau»ն հաղորդում է, որ մի քանի զօրաբանակների մօբիլիզացիայի և միւս պատերազմական բացառիկ ձեռնարկութիւնների տեղեկութիւնները հիմքից զուրկ են: Զինուորական վարչութիւնը անհրաժեշտ է գտնում սոսկ աւելացնել խաղաղ ժամանակվայ համար սահմանված սահմաններում 15-րդ զօրաբանակի կազմը: Իւրաքանչիւր վաշտ կաւելացվի 36 մարդով: Մնացած 14 զօրաբանակները մնում են իրանց նախկին կազմով:

Սահմանապահ զօրքերի այդօրինակ փոքր քանակով ուժեղացնելը Բօսնիայում և Հերցեգովինայում արդասիք էր գլխաւորապէս այն հանգամանքի, որ սահմանագլխային ազգաբնակութիւնը կարիք ունի ուժեղ պաշտպանութեան: («Հ. Գ.»)

—

Վիէննա, 4 նոյեմբերի

Ռէյխսրադի նստաշրջանը բացվում է նոյեմբերի 13-ին: («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 3 նոյեմբերի

Երիտասարդ-Թիւրքերի կուսակցութեան համագումարի տարեդարձի օրը ընտրվել է նոր կենտրոնական կօմիտէ:

Կօմիտէի անդամների անունները և նրա կենտրոնավայրը պահվում են խիստ գաղտնի:

Որոշված է տպագրել կօմիտէի գործունէութեան պատմութիւնը:

Ահմէդ-Րիզան հրաժարվել է իրան առաջարկված արտաքին գործերի մինիստրի պորտֆէլից:

Եռանդուն ագիտացիա են մղում արաբական լեզուն պարլամենտում պաշտօնական համարելու համար: («Kc.»)

—

Բելգրադ, 3 նոյեմբերի

Զեմլինում աւստրիացիները փորձ են արել խուզարկելու ռուսական սուրհանդակին, որը տանում էր իր հետ կարևոր փաստաթղթեր: Եռանդուն բողոքից յետոյ, սուրհանդակը կարողանում է շարունակել ճանապարհը առանց խուզարկութեան ենթարկվելու: («Kc.»)

ԴԻՊԼՈՄԱՏԻԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Վաղուց արդէն խօսվում էր Պետերբուրգում, որ Ա. Պ. Իզվօլսկին հանդէս պիտի գայ Պետական Դումայի առջև, սակայն ինչ-ինչ պատճառներից յետաձգվում էր այդ և այսօր էլ դարձեալ յետաձգվում է անորոշ ժամանակով:

Այդ փաստը այլ և այլ մեկնութիւնների նիւթ է դարձել Պետերբուրգի դիպլօմատիական շրջաններում, ուր աշխատում են բացատրել նրան երկրորդական նշանակութիւն ունեցող շարժառիթներով: Ընդհանրապէս դիպլօմատները լաւատես տրամադրութիւն են ցոյց տալիս. նրանք գոհ են գլխաւորապէս նրանից, որ կօնֆերենցիայի ծրագրի հարցը ռուս-աւստրիականից դարձել է այսօր ընդհանուր եւրոպական հարց:

Եթէ Աւստրիան համաձայնութիւն չը տայ մասնակցել կօնֆերենցիային, այնուհետև բանակցութիւնները կը վերապահվեն բոլոր պետութիւններին և, հաւանօրէն, Բօսնիայի և Հերցեգովինայի միացման հարցը կը մնայ թէօրետիկապէս բաց՝ երկար ժամանակով:

Այդպէս բարեյաջող չէ սակայն իրերի դրութիւնը Պարսկաստանում, որովհետև շահը խուլ է մնում դէպի ռուսական և անգլիական դեսպանների առաջարկութիւնները, որոնց ազդեցութիւնը ներկայումս աննշան է:

«Շատ հաւանական է,—աւելացնում է «P. C.» լրագրի Պետերբուրգի թղթակիցը,—որ Պետերբուրգի և սէն-Ջէմսեան կաբինետները շուտով հանգամանքներից դրդված հարկադրված կը լինեն միջամտելու պարսկական գործերին»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Էջմիածին, 4 նոյեմբերի

Ես հաղորդել էի, որ խորհրդակցական ժողովը որոշել էր դիմել հեռագրով Փոխարքային և խնդրել, որ գաղտնի քուէարկութեան մասին կայացված որոշումը ջնջվի և թոյլատրվի քուէարկութեան նախկին ձևը: Հաղորդել էի նոյնպէս, որ Փոխարքան մերժեց այդ միջնորդութիւնը:

Այժմ առաջ եմ բերում տրված հեռագրի և նրա պատասխանի պատճէնները, որպէսզի խնդիրը պարզված լինի ընթերցողների համար իր բոլոր մանրամասնութեամբ:

1) Փոխարքային տրված հեռագրի պատճէնը.

«Պետերբուրգ, Նորին Պայծառափայլութիւն Կովկասեան Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովին.

«Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար Էջմիածին գումարված բոլոր եկեղեցական և աշխարհական պատգամաւորները, եկած Թիւրքիայից, Ռուսաստանից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Ռումինիայից և Բուլղարիայից, թւով 82, ունեցող 105 ձայն, քննելով նախապատրաստական խորհրդակցութեան մէջ կաթողիկոսական պաշտօնի համար կանդիդատների քուէարկութեան եղանակը և ուշադրութեան առնելով, առաջին՝ որ նոր կանոնները, գաղտնի քուէարկութեան մասին հրատարակված այս տարւայ հոկտեմբերի 14-ին, փոխում են հայոց եկեղեցու դարևոր աւանդութիւնը, որի վրա հիմնված է բաց քուէարկութեան պրակտիկան, սրբագործված մինչև այժմ ներգործող Կովկասեան Փոխարքայի 1865 թ. հրատարակած կանոններով, ի լրումն 1836 թ. Պօլօժէնիայի հայոց եկեղեցու կառավարութեան մասին. երկրորդ՝ որ վերոյիշեալ կանոնները հրատարակված են պատգամաւորների ընտրութիւնից յետոյ և օտար երկիրների պատգամաւորները իմացել են գաղտնի քուէարկութեան մասին նոր կանոնները միայն Ռուսաստանում,—միաձայն որոշեցին խոնարհաբար խնդրել Ձերդ Պայծառափայլութեանը, որ յայտնի է ամբողջ հայ ազգին իր արդարութեամբ և ունեցած յարգանքով առ ամեն մի ազգութեան աւանդութիւններն և դարևոր սովորութիւնները, թոյլատրել այս նոյեմբերի 1-ին կատարել կաթողիկոսի ընտրութիւնը բաց քուէարկութեամբ:

«Միանալով ամբողջ պատգամաւորական ժողովի միաձայն խնդրանաց և իմանալով, որ գաղտնի քուէարկութեան մասին կանոնները հրատարակված են Ձեր կողմից պատգամաւորների շահերի և օգտի համար յանուն խղճմտանքի և համոզմունքի ազատութեան, խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Պայծառափայլութեանը ունկն դնել պատգամաւորների ձայնին և ի նկատի ունենալով նրանց միաձայն որոշումը՝ ցոյց տալ Ձեր յայտնի բարեացակամութիւնը առ ժողովուրդը, ի դէմս նրա պատգամաւորների, թոյլատրելով բաց քուէարկութիւնը:

«Ժողովի կողմից նախագահ՝ Մեսրոպ արքեպիսկոպոս»:

2) Փոխարքայի պատասխանը

«Պատգամաւորական ժողովի նախագահ Մեսրոպ արքեպիսկոպոսին.

Էջմիածին

«Պատրիարք կաթողիկոսի պաշտօնի համար կանդիդատների ընտրութեան կանոնների փոփոխութիւնը՝ բաց քուէարկութիւնը գաղտնի քուէարկութեան փոխարինութեան մտքով կատարվել է իմ ձեռքով մինիստրների խորհրդի հաւանութեամբ, ուստի և առանց մինիստրների խորհրդում գործի նոր քննութեան չէ կարող փոխվել. իմ կողմից գտնելով, որ քուէարկութեան եղանակի փոփոխութիւնը, որ հանդիսանում է միայն արտաքին գործողութիւն, չէ կարող համարվել խախտումն աւանդութեան հայոց եկեղեցու, և լինելով կատարելապէս համոզված, որ միայն գաղտնի քուէարկութիւնը ապահովում է ձայների ազատ տուչութիւնը, ես չեմ տեսնում հիմք փոխելու ընդունված ձևերը, որի մասին և խնդրում եմ Ձեզ հաղորդել իմ անունից պատգամաւորներին»:

Փոխարքայ կոմս Վ.-Դաշկով

*

Հարկ եմ համարում մի քանի անճշտութիւններ ևս հերքել, որ «Գործ» թերթը դիտաւորեալ կերպով թոյլ է տուել իրան հրատարակելու: Դիտաւորեալ եմ ասում, որովհետև «Գործի» թղթակիցը ամեն բոպէ կարող էր պաշտօնապէս ստուգել այն փաստերը, որոնց մասին նա որևէ կասկած ունէր: Առաջինը վերաբերում էր պ. Ա. Քալանթարի պատգամաւորութեան, որպէս թէ նրա պատգամաւորութիւնը չէ ընդունվել և նա չէ մասնակցել ընտրութիւններին: Սա ակնյայտնի մի սուտ է, որին ընդունակ կարող է լինել միայն «Գործի» պէս կուսակցական վատ կրքից կուրացած մի թերթ: Բոլոր 78 պատգամաւորները վկայ են, որ պ. Ա. Քալանթարը մասնակցել է ընտրութեան, իբրև պատգամաւոր Ռումինիայի հայերի կողմից: Ճիշտ է, սկզբում սինօդը առարկութիւն էր արել, թէ հեռագիրը, որով Բուխարեստի հայոց ազգային վարչութիւնը (էֆօրին) ծանուցել էր պ. Քալանթարի ընտրութիւնը, վաւերացված չը լինելով տեղական ռուսաց դեսպանից, անընդունելի է, բայց երբ պ. Մինաս Չերազ այդ մասին յայտնեց Բուխարեստ, իսկոյն եկաւ երկրորդ հեռագիր, վաւերացված դեսպանից, և սինօդը անմիջապէս յետ վերցրեց իր առարկութիւնը և ճանաչեց պ. Քալանթարին պատգամաւոր:

«Գործի» թղթակիցը շատ լաւ գիտէ այս հանգամանքը, բայց բարեխղճութիւն ունենալու համար պէտք է «գործական» չը լինել:

Երկրորդ անճշտութիւնը վերաբերում է նրան, որ իբր թէ իմ դասախօսութիւնը չէ կայացել այն պատճառով, որ ունկնդիրներ չէին եղել: Կատարեալ սուտ: Իրողութիւնն այս է: Թիւրքահայ մի քանի պատգամաւորների խնդրանօք ես յանձն առայ կարդալ մի դասախօսութիւն այն մասին, թէ ինչպէս կատարվեց 1884 թ. Ներսէս Վարժապետեանի կաթողիկոսական ընտրութիւնը: Կարգադիր մասնաժողովի որոշմամբ այդ դասախօսութիւնը որոշվեց կարդալ հոկտ. 27-ին, ցերեկվայ ժամը 4-ին, այն դահլիճում, որ նշանակված էր պատգամաւորների խորհրդակցութեան համար:

Ժամը 4-ին պատգամաւորներից շատերը և ճեմարանի աշակերտների մի մասը դիմում են դէպի այդ դահլիճը, բայց այդտեղ կանգնած երկու անձինք յայտնում են պատգամաւորներին, թէ պ. պ. Ս. Յարութիւնեանի և Աւ. Ահարոնեանի խնդրանօք հրաւիրում են թիւրքահայ պատգամաւորներին գնալ մասնաւոր խորհրդակցութեան, որ այդ նոյն ժամին այդ պարոնները նշանակել էին նոր Ղազարապատի հիւրանոցում, և թէ դասախօսութիւնը հազիւ կայանայ ժամը 6-ին: Երբ այդ բանը ինձ յայտնեց պ. Մինաս Բերբերեանը, այն է՝ թէ պ. պ. Ս. Յարութիւնեանը և Աւ. Ահարոնեանը այդ նոյն ժամին նշանակել են թիւրքահայ պատգամաւորների մասնաւոր խորհրդակցութիւն, ես յայտնեցի, որ դասախօսութիւնը աւելի լաւ է թողնել մի ուրիշ օրվայ: Սակայն ժամը 6-ին նորից մեծ թւով պատգամաւորներ և ունկնդիրներ գալիս են դասախօսութեան դահլիճը, և կարգադիր մասնաժողովը, նրանց խնդրանօք, մարդ է ուղարկում որոնելու ինձ և խնդրելու, որ գամ դասախօսութիւնս կարդալու: Դժբաղդաբար, այդ ժամին ես բացակայ էի սենեակիցս, գնացած լինելով հեռագրատուն, ուստի բազմութիւնը երկար սպասելուց յետոյ ցրվում է, և երբ ժամը 7-ին ես եկայ սեղանատուն, այդտեղ շատերը, որոնց թւում Թորգոմ վարդապետ, Սարախանեան վարդապետ, Թելլիեան և այլ շատերը իրանց դժգոհութիւնը յայտնեցին ինձ, որ ես չեկայ դասախօսելու: Ես նրանց բացատրեցի պատճառը և խոստացայ խորհրդակցական նիստերից մէկում համառօտաբար բացատրել դասախօսութեանս էութիւնը, որն և կատարեցի հոկտեմբերի 30-ի նիստում:

Արդեօք պ. Ս. Յարութիւնեան և պ. Ա. Ահարոնեան դիտմամբ էին նշանակել նոյն ժամին խորհրդակցական ժողով, դասախօսութիւնը խանգարելու նպատակով, թէ իրօք կարևոր գործ էր պատահել, ես չը գիտեմ:

*

Պարտք եմ համարում մի քանի խօսք ևս

ասել կարգադիր մասնաժողովի մասին։ Այդ մասնաժողովը ամեն ջանք գործ էր դրել, որ պատգամաւորներին լաւ ընդունելութիւն ցոյց տրվի, և պէտք է կցել, որ նա ամենայն բարեխղճութեամբ կատարեցիր պաշտօնը։ Ոչ մի ընտրութեան ժամանակ այդպիսի մաքուր և ճոխ սեղան չէր տրված պատգամաւորներին։ Այդ մասին մասնաժողովը արժանի է շնորհակալութեան։

Հ. Ա.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ. ԾԽ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

«Մշակի» № 244-ի «Ներքին լուրերի» բաժնում հաղորդել էինք, որ Թիֆլիսի թօրսային դահլիճում կայացաւ տեղական հայոց ծխական դպրոցների հոգաբարձուների ընդհանուր ժողովը, Հաւլաբարի 4 ծխական դպրոցների հոգաբարձուների նախաձեռնութեամբ։

Պ. Խաչատրեան և Մ. Յարութիւնեան զեկուցին ժողովականներին ժողովի բուն նպատակը—1) ինչ միջոցներ ձեռք առնել առհասարակ դպրոցների արդի նիւթական-տնտեսական դրութիւնը բարւոքելու համար, 2) Խօջիվանքի գերեզմանատան արդիւնքը յատկացնել տեղական հայոց ծխական դպրոցներին։

Զեկուցումից յետոյ, ժողովը, նախագահ ընտրելով Ս. Աւետեանին և քարտուղար՝ Մ. Յարութիւնեանին, անցաւ իր գրադմունքներին։

Նախ՝ որոշվեց ունենալ մի յատուկ մասնաժողով, որը պէտք է ի նկատի առնէ ժողովի մէջ յարուցված հետևեալ առաջարկները. 1) Խօջիվանքի գերեզմանատան հասոյթները յատկացնել դպրոցական ֆօնդին, 2) միացնել բոլոր դպրոցների դրամարկղները և 3) սահմանել ընդհանուր ծխական տուրք։

Այդ առաջարկութիւնների շուրջը արտայայտվեցին մի շարք թեր և դէմ կարծիքներ։ Ժողովը, ի վերջոյ, նպատակայարմար համարեց դպրոցական տուրքերի սահմանման ու, ընդհանրապէս, դպրոցների դրութիւնը ապահովելու համար ձեռք առնվելիք միջոցների մշակումը վերապահել ընտրվելիք մասնաժողովին։

Իսկ մասնաժողովը պէտք է բաղկացած լինի բոլոր հոգաբարձութիւնների կողմից ընտրված մի մի ներկայացուցիչներից։

Այնուհետև ժողովը խորհրդակցեց Թիֆլիսի թեմի ծխական դպրոցների կողմից մի հոգաբարձու ընտրելու հարցի մասին, որը պէտք է մտնի Թիֆլիսի թեմական ուսումնարանական խորհրդի կազմի մէջ։ Այդ նպատակով նա որոշեց ընտրել 4 թեկնածու, որոնցից մէկն ու մէկին պէտք է ընտրեն ամբողջ թեմի ծխական դպրոցների հոգաբարձուները թեմական խորհրդի անդամութեան համար։

Վերջում գաղտնի քուէարկութեամբ թեկնածուներ ընտրվեցին բժ. Ղազարեան, Առիւծեան, Յ. Աբազեան և Տ. Գիւզալեան, որոնց համաձայնութիւնը ստանալը յանձնարարվեց ժողովի նախագահ Ս. Աւետեանին։

Ընտրութիւնը պէտք է վերջանայ մինչև նոյեմբերի 20-ը։

Խորհրդակցութիւնը վերջացաւ մօտաւորապէս ժամը 2-ին։

Լ.

ԻՇԽ. ԴՄԻՏՐԻՅ ԻՎ. ՇԱԽՕՎՍԿՕՅ

«Մշակի» № 245-ի հեռագրական լուրը իշխ. Դ. Ի. Շախօվսկօյի մահվան մասին անշուշտ խոր ցաւ կը պատճառի ռուս առաջադիմական հոսանքի բոլոր բարեկամներին։

Իշխ. Դ. Շախօվսկօյը վախճանվեց դեռ երիտասարդ հասակում. նա ծնվել է 1861 թւին։ Համալսարանական ուսումը—լեզուաբանական ճիւղը—աւարտելուց յետոյ (1884 թւին) երիտասարդ Շախօվսկօյը նուիրում է իրան գաղափարական ծառայութեան, թէև նրա առաջ բաց էին աւելի «փայլուն» ասպարէզներ. նա վերցրեց Տվերի նահանգի Վեսեգօնսկ գաւառի (Ֆ. Ի. Րօդիչեվի հայրենիքն է) զեմստվօյի ժողովրդական ուսումնարանների կառավարչի պաշտօնը։ Այստեղ նա անձնատուր եղաւ գլխաւորապէս ժողովրդական լուսաւորութեան խնդիրների ուսումնասիրութեան և մշակման, ձեռք բերելով մեծ հեղինակութիւն այս ճիւղում։ Միաժամանակ նա զբաղված էր և գաւառի վիճակագրական-տնտեսական ուսումնասիրութեամբ։ 1890-ական թւականներին հանգուցեալը տեղափոխվում է Եարօսլաւի նահանգը, որտեղ նոյնպէս նուիրում է իրան բացառապէս զեմստվօյին, որպէս ձայնաւոր և վարչութեան անդամ։ Այստեղ Դմիտրիյ Իվանօվիչը մասնակցում է գաւառական շրջանակ օրգաններից մէկին՝ «Сѣвер. Край»-ին, որ խմբագրվում էր Վ. Միխէյեվի կողմից, այժմ նոյնպէս հանգուցեալ։

Իշխ. Դմ. Ի. Շախօվսկօյը բացի այս լեգալ, օրինաւոր գործունէութիւնից,—որին սակայն իր ժամանակ քիչ խոչընդոտներ չէին դրվում կառավարութեան կողմից,—յայտնի էր որպէս անլեգալ գործիչ։ Նա զեմստվային ընդդիմադիր գործիչների ժողովների—յայտնի Слёты անուան տակ—կազմակերպողներից մէկն էր։ Յայտնի է, որ այդ ժողովականներից ծայրայեղները յետագայում կազմեցին անլեգալ «Союзъ Освобожденія» կուսակցութիւն-բլօկը, որը վերջին ազատագրական շարժման մէջ ունեցաւ իր խոշոր դերը (տես ««Былое» 1907 թ. «Земское движеніе» յօդ. И. П. Бѣлоконскаго, տաւել յուլիս և հոկտեմբ.)։

Երբ հզօր Պլեվէի մահից յետոյ հնարաւոր դարձաւ բաց հասարակական-քաղաքական գործունէութիւնը՝ Դ. Ի. Շախօվսկօյը ցոյց տուեց ջերմ մասնակցութիւն «զեմստվօների և քաղաքների գործիչների» կազմած բոլոր ժողովներին, համագումարներին։ Նա նոյնպէս անդամ ընտրվեց յուլիսի 6-ի (1905 թ.) յայտնի պատգամաւորութեան, որ ներկայացաւ Թագաւոր-Կայսրին։

Առաջին Դումայի ընտրութիւններին հանգուցեալը փառաւորապէս անցաւ որպէս անդամ Եարօսլաւի նահանգից։ Եւ Դումայում ոչ պակաս ոգևորութեամբ ընտրվեց որպէս գլխաւոր քարտուղար։ Նա մասնակցեց «Վըբորգեան կոչին» և նորերս էր, որ դուրս եկաւ բանտից այդ կոչի համար…

«Ժողովրդական ազատութեան» կուսակցութիւնը, որի անդամն էր հանգուցեալը նրա կազմվելու օրից, յանձին իշխ. Շախօվսկօյի ունեցաւ մեծ կորուստ, որը կողբան և աջ ու ձախ գտնվողները. չէ՞ որ նա ամենքից յարգված էր որպէս բացառիկ ազնիւ բնաւորութիւն և աննկուն գործիչ…

Պետրոս Զաքարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 4 նոյեմբերի

Նոյեմբերի 2-ին, կիրակի երեկոյեան, տեղական ակումբի մէջ նշանակված էր համերգ և պարահանդէս յօգուտ Կ. Հ. Բ. ընկ. տեղական ճիւղի։ Կաթողիկոսական պատգամաւորներին ուղարկված էին պատւաւոր տոմսակներ։ Սակայն Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչի մահվան առիթով, պարահանդէսը տեղի չունեցաւ, այլ կայացաւ միայն համերգը։

Իսկ երէկ, նոյեմբերի 3-ին, նոյն ակումբում տրվեց ճաշկերոյթ ի պատիւ պատգամաւորների։ Կարգադիր մասնաժողովի որոշմամբ սեղանի կառավարիչ նշանակվեց պ. Ստեփան Թաղիանոսեան (Շամախու թեմի պատգամաւոր), որ պէտք է ասել մեծ հմտութեամբ և տակտով կառավարեց սեղանը։ Բաժակներ առաջարկվեցին նորընտիր կաթողիկոսի, Թիւրքիայի հայութեան, պատգամաւորների և Էջմիածնի միաբանութեան համար։ Ճառեր խօսեցին Աշտ եպիսկոպոս Փափազեան, Մինաս Չերազ, դօքտոր Տաղաւարեան, Արշակ Չօպանեան, Թորգոմ վարդապետ, Յակոբ Շաւարշ, Պալաքեան վարդապետ, Խարախանեան վարդապետ, Հ. Առաքելեան, Ս. Յարութիւնեան և այլք։

Թիւրքահայ պատգամաւորներից պ. Յ. Շաւարշ (Եդեսիայի պատգամաւոր) բաժակ առաջարկեց հայ մամուլի համար, որին պատասխանեց Հ. Առաքելեան, կառավարչի առաջարկութեամբ։ Հ. Առաքելեան ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Երբ պ. Յ. Շաւարշ բաժակ առաջարկեց հայ մամուլի բարգաւաճման համար և շատերը ինձ դիմեցին իրանց բարեմաղթութիւններով, իբրև մամուլի ներկայացուցչի, պ. կառավարիչը առաջարկեց ինձ պատասխանել այդ բարեմաղթութիւններին։ Սակայն ես, թէ հիւանդութեան պատճառով և թէ այն պատճառով, որ այստեղ կան մամուլի աւելի արժանաւորագոյն մշակներ, չը կամեցայ ինձ վրա առնել այդ քաղցր պարտականութիւնը. այժմ, տեսնելով որ մամուլի ներկայացուցիչները ինձ են թողնում այդ պարտքը կատարել և վախենալով, որ մամուլի արտայայտութիւնը այստեղ չերևայ կամ, աւելի ճիշտն, հայ մամուլի այն մասի, որ Իզմիրլեանի ընտրութեան աջողութեան ամենահզօր գործօնը հանդիսացաւ, ես, իբրև մամուլի համեստ մշակներից մինը, բացարձակապէս յայտնում եմ այստեղ, որ կաթողիկոսական ընտրութեան հարցում հայ մամուլը՝ թէ Ռուսաստանում, թէ Թիւրքիայում, շատ քիչ բացառութեամբ, իր կոչման բարձրութեան վրա կանգնած մնաց։ Ցանկանալով, որ հայ մամուլը Թիւրքիայում ազգային միւս գործերի մէջ ևս կարողանայ կանգնել իր կոչման բարձրութեան վրա, խմում եմ Թիւրքահայ մամուլի բարգաւաճման կենացը»։

Գեղեցիկ ճառեր խօսեցին պ. պ. Մինաս Չերազ, Արշակ Չօպանեան և դօքտոր Տաղաւարեան։ Չերազ ասաց, որ Թիւրքահայերը մեծ գոհունակութիւն արեցին տալով իրանց ամենից պատուական մարգարիտը, Իզմիրլեանին, այն րօպէին, երբ նրանք շատ պէտք ունէին երկաթէ պատրիարքին։

Ճաշկերոյթը անցաւ ուրախ և զուարթ և պատգամաւորները իրանց անկեղծ շնորհակալութիւնները յայտնեցին Երևանի հայ հասարակութեան, որ կարողացաւ այնքան սիրալիր և շքեղ ընդունելութիւն ցոյց տալ նրանց, ինչպէս ցոյց է տուել և նախորդ անգամները։

**

—

Սանահին, 2 նոյեմբերի

Թոյլ տուէք «Մշակ» լրագրի մէջ զետեղելու մի քանի խօսք Սանահին գիւղի մասին։

Հասարակութեան մեծամասնութեանը ծանօթ Սանահին գիւղը, որ յայտնի է իր պատմական վանքով, ունեցել է բաւական այցելուներ և համեմատելով նախանցեալ տարիների հետ՝ այժմս աւելի շատ է այցելուների թիւը։

Արքեպիսկոպոս Սաթունեանը շինել է ճանապարհը, որով այժմս կարելի է ազատ երթեւեկել։

Ս. Վ. Արղութեանի նախաձեռնութեամբ, ահա երկրորդ տարին է, որ ուսումնարան է բացվել, և այս կարճ ժամանակվայ ընթացքում ձեռնարկվել է գիւղացիների օգնութեամբ սեփական երկյարկանի շինութեան, որը եկող սեպտեմբերից պատրաստ կը լինի։

Սանահինը ունի 70 տուն ծուխ, որ ամենաչնչին թիւ է, ունի իր սեփական ուսումնարանը, որը պարծանք է գիւղին, մինչդեռ կան աւելի շատ ծուխ ունեցող գիւղեր, որոնք զուրկ են ուսումնարանից. այդ դպրոցում, որը ունի մի վարժուհի, սովորում են մօտ 40 երկսեռ երեխաներ։ Պարզ բան է, որ մի վարժուհու համար շատ դժուար կը լինի 40-ից աւելի երեխաների հետ պարապել, իսկ վարձել երկրորդ ուսուցիչ դպրոցը չէ կարող. իսկ ինչ վերաբերում է գիւղացիներին, այնքան նեղ դրութեան մէջ են, որ իրանց երեխաների հագուստն անգամ չեն կարողանում հոգալ, ուր մնաց որ ուսուցչի վարձ տան։ Մնում է, որ երկրորդին փոխարինէ տեղական քահանան կամ վարդապետը, ի հարկէ վարձատրութեամբ։

Անցորդ

—

Բագու, 3 նոյեմբերի

Նոյեմբերի 2-ին, կիրակի օր, տեղիս Լուսաւորչի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Մկրտիչ ամենայն հայոց կաթողիկոսի մահվան տարեդարձի առիթով։ Ներկայ էր հոգևորականութեան ամբողջ կազմը։ Եկեղեցու աւ. քահ. Գրիգորեանցը օրվայ պատշաճ քարոզ խօսեց։

X.

ԹԻՖԼԻՍ-ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Թիֆլիսից դէպի Վլադիկավկազ, Կովկասեան լեռնաշղթան ճեղքելով, երկաթուղային գիծ անցկացնելու խնդիրը վերջապէս դրվում է իրականացման ճանապարհի վրա։

Իրականանում է, սակայն, ոչ այն ծրագրով, որը մշակված էր տարիներ առաջ և մեծ ծախքեր էր պահանջում։

Երկաթուղային այդ գծի հարցը, ինչպէս յայտնի է, յարուցված է 80-ական թւականներից սկսած, և կառավարութեան կողմից նրա անհրաժեշտութիւնը 1894 թւին ընդունված է մինիստրների խորհրդի յատուկ ժողովում, իբրև կարևոր քաղաքական, ռազմական, վարչական և առևտրական տեսակէտից, որը պէտք է զրաւէր դէպի Ռուսաստան այդ կարճ գծով ոչ միայն տեղական, այլ և Պարսկաստանի և Թիւրքիայի կենսական շահերը։

Չը նայելով որ կատարված են եղել հարկաւոր աշխատանքները և կազմված երեք նախագիծ այդ մասին, այնուամենայնիւ մինչև 1907 թիւը գործը ոչ մի ընթացք չէ ստանում շնորհիւ այն հանգամանքի, որ նորմալ ձևի երկաթուղային գիծը առնուազն կը պահանջէր կառավարութիւնից 50—75 միլիօն ռուբլի։

1907 թւին սակայն հանդէս են գալիս նոր առաջարկներ և հարցի լուծումը դըրվում է բոլորովին տարբեր հողի վրա։

Ինժեներների մի խումբ առաջարկում է կառավարութեանը անցկացնել էլեքտրական երկաթուղի, որը պիտի արժենար 20 միլիօն ռուբլի, բայց այդ գումարն էլ ապահովվում էր երկաթուղային 8 % եկամուտով։

Թէ որքան հնարաւոր է և նպատակայարմար այդ նախագծի իրագործումը՝ այժմ արդէն բաւականաչափ պարզված է, և խընդիրը դրական ու նպաստաւոր ընթացք է ստացել։

Կովկասի Փոխարքայի հրամանով 1907 թւին կազմված խորհրդակցութիւնը այդ խնդրի առիթով եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է էլեքտրական երկաթուղու հարցը վերջնականապէս լուծել։ Այդ մասին հարկաւոր դիմումն արվել է արդէն, խնդիրը համակրութիւն է գտել ոչ միայն կովկասեան բարձր կառավարութեան, այլ և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան մէջ, մինիստր նախագահի և նոյնիսկ ֆինանսների մինիստրի կողմից, որոնք խոստացել են ամեն կերպ աջակցել։

Այնուամենայնիւ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը, ի նկատի առնելով պետութեան ներկայ նիւթական սուղ դրութիւնը, հնարաւոր չէ գտնում մօտ ապագայում իրագործել այդ ծրագիրը։

Չը նայելով դրան, խնդիրը այսօր միանգամից գրաւել է ինչպէս կառավարչական, նոյնպէս և ֆինանսական շրջանների ուշադրութիւնը։

Նախագիծը արդէն ընդունվել և հաւանութիւն է ստացել։ Բայց կառավարութիւնը քանի որ իր միջոցներով ոչ մի հնարաւորութիւն չունի իրագործել այդ ծրագիրը, մնում է, որ երկրի ֆինանսական ոյժերը հանդէս գան գլուխ բերելու այդ օգտակար ձեռնարկութիւնը, որ կոչված է մեծապէս զարկ տալու երկրի տնտեսական զարգացմանը աւելի էժան նըստեցնելու և շուտ արտահանելու տեղական բերքերը դէպի մեծ շուկաները։

Գործի ամենադժուար մասը նախաձեռնողների անխոնջ ու եռանդուն գործունէութեան շնորհիւ արդէն վճռված է, և պէտք է յուսալ, որ էլեքտրական երկաթուղու վերջնական նախագիծը, եթէ Փոխարքան ներկայացնի պաշտպանաւոր իշխանութեանը, աջող լուծումն կը ստանայ, և, գործը յանձնելով կօնցեսիօներներին, հնարաւորութիւն կը տրվի իսկոյն և եթ գործին անցնել։

Վերջնական նախագիծը արդէն մշակվում է Փոխարքային ներկայացնելու համար։

Լ. Դ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյեմբերի 4-ին Թիֆլիսի I հաշտարար դատարանում քննվեց Բեռլինի համալսարանի ցօգնտ Բագրատ Խալաթեանի գործը, որի մասին անցեալները տեղեկութիւն տրվեց լրագիրներում։

Պ. Խալաթեան բացակայ էր։

Հաշտարար դատարանը քննելով գործը, փոխեց նախկին վճիռը (4 օր բանտարկութիւն) և որոշեց գործը ընդմիշտ դադարեցնել։

—

Նոյեմբերի 1-ին Թիֆլիսի նահանգական դատարանի 2-րդ քրէական բաժնում կը քննվի «Голосъ Кавказа» դադարած լրագրի խմբագիր Բօգօմօլօվի գործը, որ Թիֆլիսի ոստիկանապետ Ցիխօցկու կողմից մեղադրըվում է զրպարտութեան մէջ։ Գործը կը քննվի դռնփակ։

—

Նոյեմբերի 10-ին Թիֆլիսի նահանգական դատարանի 1-ին քրէական բաժնում նշանակված է քննելու Իխիլչիկի և միւսների մեծադղորդ գործը, որոնք մեղադրըվում են երկաթուղային գնացքների ճանապարհորդական տոմսակները կեղծելու մէջ։

Այս գործի համար կանչված են մօտ 100 վկաներ։

Խ Օ Լ Ե Ր Ա

Նոյեմբերի 2-ին Թիֆլիսում խօլերայով հիւանդացաւ Դեմենտիյ Դերիւխօվ, 28 տարեկան, 5-րդ քաղաքամաս, զինւոր։ Նոյեմբերի 4-ին հիւանդացան Ռսկեհատ Քամանջեան, 5-րդ քաղաքամաս, Ալէքսէյ Մուրկօվ, Սուրբ-Սարգսի փողոց. վերջինս մեռաւ հիւանդանոցում։

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական մարմնի տեղեկութիւնների համաձայն, նոյեմբերի 1-ից մինչև 4-ը խօլերայի դէպք չեղաւ քաղաքում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յիշեցնում ենք, որ այսօր երեկոյեան տեղի կունենայ կաթողիկոսական պատգամաւորների պատւին տրվելիք ներկայացումը Թիֆլիսի Արտիստական թատրօնում։

◆ Ինչպէս լսում ենք, ի. պատիւ կաթողիկոսական թիւրքահայ պատգամաւորներին տրվելիք հանդիսաւոր հացկերոյթին, որ պէտք է տեղի ունենայ վաղը, յանձնաժողովի հրաւէրով երգելու և նուագելու է աշուղ Ջիւանին իր խմբով։

◆ Ստացված տեղեկութիւնների համաձայն, անդրկովկասեան բոլոր երկաթուղագծերում մեծ ձիւնային փոթորիկներ են։ Ալէքսանդրօպօլից մինչև Կարս բոլոր գնացքների երթևեկութիւնը դադարել է։ Հեռագիրը և հեռախօսը գործում են։ («П.»)

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում, (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ Միւնխէնի համալսարանի պրօֆ. Ա. Դիրրի 7-րդ դասախօսութիւնը կովկասեան լեզուների մասին։ Դասախօսը շուտով կաւարտէ իր դասախօսութիւնների շարքը։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատունը տեղեկացրեց Թիֆլիսի նահանգապետին, որ ինքը կարգադրել է նրա իշխանութեան տակ դնել, բացի արդէն դրված 50,720 ռուբլուց, կրկին 21,300 ռուբլի 1908 թ. զօրամասերի բնակարանների վարձի համար. Թիֆլիսին՝ 19,800 ր., Ախալցխային 1000 ր. և Գօրուն՝ 500 ռուբլի։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ-մ. Նէյգեբաուէրը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի, բոլոր երկաթուղիների կառավարիչներին և միջազգային, կովկասեան և անդրկասպեան հաղորդակցութեան համագումարին հեռագրով տեղեկացրել է, որ Բագու կայարանի բոլոր պահեստները լի են և տեղ չը կայ այլևս նոր ապրանք իջեցնելու. կայարանում կանգնած են 200-ից աւելի չը դատարկված վագօններ ապրանքատէրերի չը պահանջելու պատճառով։ Ուստի և, վերոյիշեալ հանգամանքները նկատի առնելով, անդրկովկասեան երկաթուղիները նոյեմբեր ամսից սկսած մինչև յետեղեկութիւն դադարեցնում են իրանց կայարաններում բոլոր տեսակի ապրանքների ընդունելութիւնը, բացի շուտ փչացողներից, զինուորական մարմին պատկանողներից և կենդանիներից։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կառավարական քննութիւնը դեռ շարունակվում է։

◆ Թիֆլիսում կազմակերպվել է մի նոր համակրելի ընկերութիւն «Երեխաների աշխարհ» անունով։ Ընկերութեան կանոնադրութեան առաջին կէտը ասում է. «Ընկերութեան նպատակն է նպաստել բոլոր հասակի երեխաների ֆիզիքական, բարոյական և էստետիքական բացիօնալ զարգացմանը»։

◆ Նոյեմբերի 3-ին Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցվեց վրացերէն լեզուով լոյս տեսնող «Ջվէնի Էկալի» օրագիրը։

◆ Թիֆլիսի մանր առևտրականների օրինակով, Բաթումի առևտրականները Բաթումում հաստատում են «մանր և միջին առևտրականների արհեստակցական միութիւն»։

◆ Թիֆլիսում կազմակերպվել է «հիւրանոցների և ռեստօրանների արտէլ», որի կանօնադրութիւնը արդէն հաստատված է։

◆ Նաւթլուղում քաղաքային հողերի բաժանումը երկաթուղային ծառայողների միջև՝ վերջացաւ։

◆ Քաղաքային վարչութիւնը որոշել է հեծանւորների տուրքի առնումը աճուրդով տալ մասնաւոր անձանց։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Նոյեմբերի 4-ին, ցերեկվայ ժամը 2-ի մօտերը, Վերայի զառիվերում, էլեքտրաքարշի վագօնը, որ կառավարում էր վատման Գէօրգի Գրէչօվը, անցաւ կառապան Հայրապետ Սահակեանի վրայով, որ ապրանք էր տանում Կովկասեան դեղատան համար և ճխլեց նրան։ Դիակն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Նոյեմբերի 4-ին, ցերեկվայ ժամը 1-ին, օրիորդ Աննա Տրիդեակօվ, 19 տարեկան, որ ապրում է Մօսկօվսկայա փողոցում, № 13 տանը, պարօմի վրա կանգնած ժամանակ, կամենալով բռնել իր շալը, որ քամուց կարծես ընկնելու էր ջուրը, ինքն էլ հաւասարակշռութիւնը կորցնելով ընկաւ Կուր գետի մէջ, բայց իր ժամանակին վրա հասան լուղորդները և ազատեցին նրան։

◆ Պարսկահպատակ Թորոս Կորթունի բնակարանից, որ գտնվում է Կլասիչէսկայա փողոցում, № 8 տանը, գողացել են նոյեմբերի 3-ին, նրա բացակայութեան ժամանակ, 200 ռուբլու գրամմօֆօնի պլաստինկաներ և 100 ռուբլու արժողութեան վերարկու և կօշիկներ։ Գողութեան մէջ կասկածվող [illegible] ձերբակալված է։

◆ Նոյեմբերի 4-ին Պալաւլեւայա փողոցում, № 4 տանը, Իվան Վասիլեւի բնակարանից [illegible] գողացել են 300 ռուբլու [illegible] իրեր։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Berliner Tageblatt» լրագրի ասելով, կոմս Ս. Իւ. Վիտտէն նշանակված է Իտալիայի դեսպան Մուրավիեվի փոխարէն, որը փոխադրվում է Պարիզ։

◆ Նահանգապետներից շատերը [illegible]

◆ [illegible]

◆ [illegible]

◆ Պետական կօնտրոլի հաշուետւութեամբ, [illegible] 300,000-ի։

◆ Մօտ օրերս Պետերբուրգի եկեղեցիներից մէկում պէտք է տեղի ունենար մի [illegible] 25,000 [illegible] 3000 ռուբլի։ [illegible]

◆ Հոկտեմբերի 30-ին Եկատերինբուրգից հեռագրում են «Р. С.» լրագրին, որ [illegible] 25 միլիօն ռուբլու [illegible] վիրաւորվում է ծանր կերպով։ Կալանաւորված են 5 հոգի։ Նրանց մօտ գտել են զինւորական հագուստներ։

✦ Թէօդօսիայում, նոյեմբերի 30-ին, քաղաքային նոր հիւանդանոցի շինութեան տեղը փորելու ժամանակ, բանւորները գտել են հողի մէջ մի կուժ լի ոսկի հին դրամներով։ Դրամները ուղարկված են թանգարաններին։ («Р. С.»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 30 նոյեմբերի

Զիջելով տեղիս գիտակից անձանց ցանկութեան, որոնց սրտին մօտ է դպրոցական սուրբ գործը և չեն ուզում ի զուր տեղը մի որևէ անտեղի խօսք լսել այդօրինակ հիմնարկութեանց հասցէին, թէև մի քիչ ուշ, բայց և այնպէս ուղարկում եմ խմբագրութեանդ այս երկտող պատասխանս ի դիմաց ձեր թերթի թղթակից պ. Սարգօյի այն նամակի, որ տպված էր «Մշակի» № 223-ում, և լիայոյս եմ, որ խմբագրութիւնդ տեղ կը տայ իր թերթում։

Պ. Սարգօն գրում է. «Պէտք է նկատել, որ ուսուցիչը մեծ խոստումներ է անում հասարակութեան և իրան շրջապատող հոգաբարձութեան. արդեօք խօսքեր, թէ՞ գործեր...»։ Նախ և առաջ, պ. Սարգօ, իմ ասած ճառը դպրոցի բացման մաղթանքի օրը՝ խոստումներ չէին, ինչպէս դուք էք գրել—«Դպրոցի ուսուցիչ Յ. Աղաբաբը ճառեց դպրոցի և ընտանիքի միջև եղած սերտ յարաբերութեան մասին, հասարակութեան առաջ դնելով մի քանի միջոցներ, որոնցով դպրոց և ընտանիք կապվել են իրար հետ»—այլ՝ այն միջոցները, որոնցով կապված են ընտանիքն ու դպրոցը։ Սրանից պարզ է, որ խոստումների և միջոցների միջև կայ մեծ տարբերութիւն. այդ բանն անպատճառ ի նկատի պէտք է առնէիք։ Երկրորդ, ձեր գրած՝ «արդեօ՞ք խօսքեր, թէ՞ գործեր...» նախադասութեան համար կասեմ այսքանը. երբ հասարակութեան առաջ պարզվեցին դպրոց և ընտանիք սերտ յարաբերութեան մէջ պահելու միջոցները, շատ պարզ է, որ միջոցների այն մասը, որը զուտ պարտականութիւնն է իմ և իմ ուսուցչական խմբի՝ դրանց իրագործումը պահանջելի է մեզանից և ես միանգամայն լիայոյս եմ այդ ամենի կատարմանը, դեռ մի բան էլ աւելին՝ իբրև «հայ ուսուցիչ»... իսկ, միջոցների այն մասը՝ որ զուտ պարտականութիւն է՝ ընտանիքի անդամ ծնողների, ահա այդ բանի մէջ՝ ոչ միայն ուսուցչութեան, այլև իւրաքանչիւր գիտակ անձնաւորութեան համար թերևս կասկածելի է, որովհետև բոլորս ճանաչում ենք մեր անտարբեր ծնողներին։ Բարեխղճօրէն ասած, դուք, որպէս թղթակից և հասարակական գործերով հետաքրքրվող անդամ, պարտաւոր էիք և միշտ էլ պարտական էք՝ արթուն կերպով հսկել, տրամադրել, ոգևորել, խորհուրդ տալ տեղիս ընտանիքներին, ծնողներին, ընդհանուր հասարակութեան, որպէսզի նրանք միշտ հետաքրքրվեն դպրոցական գործով և իրանց պարտականութեան գոնէ ¼ մասն ի կատար ածեն։ Այն ժամանակ ահա, ժամանակի ընթացքում ինքնըստինքեան կերևայ՝ որ մեր խօսքերը գործի կը փոխարինվեն։ Աշխատեցէք չը խօսել միակողմանի։

Գանձակի. ս. Յովհ. եկեղ. ծխական դպրոցի ու.-ուսուցիչ՝ Յ. Աղաբաբ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

✦ Զէյթունից 6 ժամ հեռու գտնվում է Ֆանուզ անունով մի աւան, որի հայ և թիւրք բնակիչների հաւանութեամբ՝ հասարակութեան անդամներից 13 հոգի կազմել են մի յանձնաժողով և երդւել են այսուհետև արդարութեամբ և ուղղամտութեամբ վարել շրջակայ բոլոր գիւղերի գործերը։

✦ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում անգլիերէն լեզւով հրատարակվող «The Armenian» ամսաթերթը յայտնում է, որ Հնդկաստանի կառավարական խորհրդարանի նախագահ է ընտրված հայազգի Յ. Կ. Աբգար, իսկ անդամ նոյն խորհրդարանի՝ Ս. Օ. Մովսէս։

✦ Կիլիկիայի կաթողիկոսը նոյեմբերի 13-ին հեռագրով դիմել է Կ. Պօլսի ազգ. պատրիարքարանին, յայտնելով որ ամբողջ Կիլիկիան ներկայումս գտնվում է մի մեծ ու համատարած հայկական ջարդի երկիւղի տակ։ Կաթողիկոսը շուտափոյթ կարգադրութիւն է խնդրել պատրիարքարանից։ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը անմիջապէս թակրիրով դիմել է մեծ վէզիրին։

✦ Նոյեմբերի 8-ի լոյս 9-ի գիշերը Կ. Պօլսի Թասգիւղ կոչված թաղում հայերի տների վրա կաւիճով նշաններ էին արված։ Այդպիսի նշաններ երևացել են այդ նոյն թաղի հայ տների վրա սրանից 12 տարի առաջ՝ Կ. Պօլսի հայկական կոտորածի ժամանակ։

✦ Երուսաղէմից Կ. Պօլիս հասած տեղեկութիւններից երևում է, որ ս. Յակոբի վանքը ծանր դրութեան մէջ է գտնվում ներկայումս։ Այդ առիթով Երուսաղէմի հայոց պատրիարք Յարութիւն Վեհապետեանի և վանքի տնօրէն խորհրդի կողմից հեռագիրներ են ստացվել Կ. Պօլսի հայոց պատրիարքարանում։

✦ Լուր է պտտում, թէ Կ. Պօլսի ռուսաց դեսպան Զինօվիևի տեղ նշանակվում է Հռոմի ռուսական դեսպան կոմս Մուրավիէվը։

✦ «La Turguie» թերթը հաղորդում է, որ Սերէզում յոյների և բուլգարների միջև ընդհարում է տեղի ունեցել։ Բազմաթիւ վիրաւորներ ու սպանվածներ կան։ Բաղդադից էլ հրէաները հեռագրել են Կ. Պօլսի իրանց հոգևոր պետին, թէ այդ քաղաքում հրէաների կեանքն ու գոյքը վտանգի մէջ են։ Այս տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Թիւրքիայում կեանքը գաւառներում ապահով ու նորմալ դրութեան մէջ չէ գտնվում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

4 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դայլնիի ռուսաց գեներալ-հիւպատոսի տեղեկագրութեան համաձայն, տեղական եապօնական իշխանութիւնները նոր կանոններ են հրատարակել, որոնցով զիրկվում են ռուսահպատակների՝ տների և ամբարանոցների վրա ունեցած իրաւունքները Պորտ-Արտուրում։

Պրօֆ. Ամալիցկին հաստատվեց Վարշավայի պօլիտեխնիկումի վերատեսչի պաշտօնում։

Նիժնի-Նովգորոդի, Սիմբիրսկի, Պենզայի, Ուֆայի, Կովնոյի, Տօբոլի, Սեմիպալատինսկի նահանգները և Անդրկասպեան շրջանի Մանգըշլաղի գաւառը, Վօլգա գետը՝ սկսած Աստրախանից մինչև Տվեր՝ և մերձակայ ջրանցքները ճանաչվում են ապատ խօլերայից, Կրեմէնչուգը վտանգաւոր։

Մայրաքաղաքում մի օրում հիւանդացան 15, մեռան 4 հոգի։

ՍՏԱՒՐՕՊՕԼ։ Ցայանի յանցաւորները փորձ արին փախչել բանտից, սակայն իր ժամանակին նրանց մտադրութիւնը խափանվեց։ Նրանց կամերաներում գտնվեցին ատրճանակներ, ռումբեր, պայթուցիկ նիւթեր և զանազան գործիքներ։

ՕՄՍԿ։ Վերջացաւ անասնաբոյժների խորհրդակցութիւնը։

ԽԱՐԿՕՎ։ Զինւորական դատարանը Րիժկօվում հինգ հոգուց բաղկացած մի ընտանիքի սրի քաշելու համար երկու գիւղացիների դատապարտեց կախաղանի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դատաստանական պալատը «Երեք թագաւորներ» բրօշիւրի հրատարակիչ Արաբիձէին դատապարտեց երկու տարով բանտարկութեան առ գերագոյն իշխանութիւնը յանդուգն վերաբերմունքի համար։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Բացվեց անտառապահների շրջանային համագումարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բիւջէտային մասնաժողովը ներքին գործերի մինիստրութեան ևւմտի նախահաշիւը թողեց նոյնը. մուտք՝ 701,111 րուբլի, ելք՝ 6,211,014 րուբլի։

ԳԱՆՁԱԿ։ Ռուսական Կօտլեարեվսկայա գիւղում խօլերայով հիւանդացաւ մի կին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Դումային ներկայացրեց մի օրինագիծ Սարատովում համալսարան հիմնելու մասին։

ԲԵՐԼԻՆ։ Գարեջրանոցների և հիւրանոցների տէրերը, թւով 7000 մարդ, բողոքեցին գարեջրի վրա աւելացվելիք տուրքի դէմ։

ԼԱՅՊՑԻԳ։ Պետական դատարանում պահանջ դրած մարդը, որի պահանջը ժառանգութեան մասին մերժվեց, կրակեց տաս անգամ և սպանեց գրագրին, ծանր վիրաւորեց դատարանի անդամներից մէկին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Պուկիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սեֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացեայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նախամարդեան

ԾԱԽՎՈՒՄ Է

պղնձէ ցիլինդր, վաննա, դուշ իրանց բոլոր պարագաներով. կարելի է տեսնել ցերեկվայ 1—3 ժամը։ Московск. ул. № 3, кв. 1.

3—1

Լոյս տեսաւ

Գունաւոր պատկերազարդ մանկ. գրադարանի №1.

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Բանաստ. Յովհ. Թումանեանի

Նկարներ Գ. Երիցեանի

Գինն է 25 կ.

Վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում։ Գումարով առնողները կարող են դիմել հրատարակիչ՝ իշխ. Մ. Թումանեանին. Тифлисъ, ул. Паскевича № 6.

Գումարով առնողներին 20 % զեղչ։ Ապառիկ չէ ընդունվում։

(օ. մ.) 5—2

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ.
5—6 ժ. երեկ.

Վելիամինօվսկայա փող., № 10.

(ա. օ.) 100—8

ԲԺԻՇԿ Ն. Ա. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ

Ներքին եւ երեխայոց

Հիւանդութիւնների

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է { առաւօտեան 12—2 ժ.
երեկոյեան 5—7 ժ.

Օլգինսկայա փողոց, № 14.

(շ. ե. հ.) 20—6

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Սիֆիլիս, վեներական, միզասեռական եւ մորթու ցաւեր

Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր.
5—7 ժ. երեկ.

Սօլօլակ, Բէհբութեան փողոց № 33.

(հ. շ.) 100—20

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։

Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան
5—6 երեկոյեան

Միքայէլեան փող., № 36, ա. Ճավճանիձէի։

100—47

Լոյս տեսաւ

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐՆ ու ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցին, կամ՝ Св. Эчміадзинъ, архимандриту Бабкену.

(ե. հ. շ.) ապ. 6—4

ЕДИНСТВ. ПРЕДСТАВ.
И. ШТРУМФЕЛЬДЪ ВАРШАВА
ЧАСЫ ПАТЕНТЪ 1вый СОРТЪ

ԻՆՉ ԲԱՆ Է ԱՆԿԵՐԸ

Անկերը—դա այն մեխանիզմն է, որը համարվում է ամենալաւը ժամացոյցների կազմուածքի մէջ։ Հետևաբար գործարանը նախազգուշացնում է այն ամենքին, որոնք կամենում են լաւ ժամացոյց ունենալ, պատուիրել բացառապէս մեր ներկայացուցչին։ Մեր առաջարկած ժամացոյցը սև պողպատից է, մեխանիզմը «ԱՆԿԵՐ», լարելը 36 ժամը մէկ անգամ, առանց բանալիի։ Այդ ժամացոյցը նման է հին ժամանակների խրօնօմետրին, որը ներկայումս էլ գնահատվում է 10 ր.։ Գործարանը հնարաւորութիւն է գտել առաջարկել ամենքին այդ առաջնակարգ և գեղեցիկ ժամացոյցը 2 ր. 75 կոպէկով. 2 հատը—5 ր.։ Ամեն մի ժամացոյցը ապահովված է 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Ճանապարհածախքը 1—4 ժամացոյցի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Նորաձև ոսկուց կարճ շղթայ բրելօկով 75 կ. և 1 ր. 50 կ.։ Նոյն տեսակ երկար շղթայ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ Т-во «З А Р Я», Варшава.

(6, 9, 16, 23, 30, 7) 55238 6—1

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻ համար հարկաւոր է մի փորձված

ՏԻՐԱՑՈՒ

Ամսական 15 ր. ռոճիկ և ժողովրդական արդիւնք։

Դիմել Թէմիր-Խան-Շուրայի հայոց եկեղեցու երէցփոխ Սամուէլ Սաֆարեանցին։

(հ. շ. ե.) 3—1

УГОЛЬ

КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ,
ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.

(ա. օ.) 52—45

ՀԱՑԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԵՂԲԱՐՔ Բ. եւ Գ. ՏԷՐ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑՆԵՐԻ

Յայտնվում է Անդրկովկասի բոլոր հացավաճառներին, որ Անդրկասպեան երկրի Սախարադ քաղաքում վաղուց բացած ունենք ալիւրի և հացահատիկի պահեստ։ Ընդունում ենք պատուէրներ՝ ճանապարհելու ըստ պահանջման։ Պատուէրները կատարվում են իսկոյն՝ կանխավճար ստանալով իւրաքանչիւր վագոնին երկու հարիւր րուբլի։ Նմուշները ուղարկում ենք ցանկացողներին։ Տեղական օրվայ արժէքը. գեղին լաւ ցորենը՝ պուդը մինչև 1 ր. 10 կ., հասարակը՝ մինչև 1 ր. 5 կ.։ Նոյն ցորենի ալիւրը—«բազմօլը» 10 կ. թանգ։

Եղբ. Բ. եւ Գ. Տէր-Բաղդասարեանցներ

Հասցէ { Նամակների համար. Асхабадъ, Бр. Б. и Г. Теръ-Багдасарянцъ
Հեռագիրների համար. Асхабадъ, Тербагдасарянцъ

(հ.) ապ. 5—4

ВѢРНО 1вый СОРТЪ
И. ШТРУМ ФЕЛЬДЪ
ВАР ШАВА

ՀԵՏԵՒԵՑԷՔ ՄՕԴԱՅԻՆ

Ամբողջ Եւրոպան այժմ գործ է ածում միայն «Патентъ 1-ый сортъ» նոր ժամացոյցը։ Այդ ժամացոյցը տափակ է (քիչ հաստ արծաթէ րուբլանոցից), սև պողպատից, ընթացքը քարերի վրա՝ րէմօնտուար, լարելը առանց բանալիի՝ 40 ժամը մի անգամ։ Ժամացոյցի ձևը այնքան շքեղ է, որ ամեն մի մարդու ճաշակին բաւարարութիւն կարող է տալ (տես նկարը)։ Որպէսզի կարելի լինի ծանօթացնել Ռուսաստանին այդ գեղեցիկ ժամացոյցի հետ, ֆաբրիկան նշանակել է շատ էժան գին—3 ր. 25 կ., իսկ երկու հատը՝ 6 ր.։ այդ ձևի կանացի ժամացոյց—4 ր. 25 կ., երկու հատը՝ 8 ր.։ Այդ ձևի արծաթեայ ժամացոյց տղամարդկանց համար—5 ր. 75 կ., երկուսը՝ 11 ր.։ Եթէ դուք գեղեցկի սիրահար էք, բերել տուէք այդ ժամացոյցը և դուք ընդմիշտ շնորհակալ կը լինէք։ Ամեն մի ժամացոյցը ապահովված է 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Ճանապարհածախքը 1—4 հատի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Կարճ շղթայ՝ նոր ձևի ոսկուց՝ բրելօկով—75 կ. և 1 ր. 50 կ., երկար շղթայ—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Св. Креста, 189.

14—8

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌԻԳԱՅՈՒՄ

1888

ФАБРИЧ. КЛЕЙМО Т. Р. Ф. З. ПРОВОДНИКЪ РИГА

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4.

Առաջարկում է մեծաքանակ եւ հատով

Կառքերի համար բէզինէ շիներ.

Աւտօմօբիլների համար պնէվմատիկ շիներ «ԱԼՄԱԶ» (կարմիր).

Վելօսիպեդների համար պնէվմատիկ շիներ.

Աւտօմօբիլ-օմնիբուսների համար խիտ-բէզինէ շիներ.

«ՊՐՕՎՕԴՆԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած շիները երկար տարիների ընթացքում ճանաչված են իբրև առաջնակարգ և բարձր են կանգնած արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաների շիներից, որի համար վկայում է ոչ միայն նրանց վերաբերմամբ եղած խոշոր պահանջը Ռուսաստանի սահմաններում, այլ և գլխաւորաբար մեծ քանակութեամբ արտասահման արտահանելը։

Համաշխարհային աշխարհի ամենալաւ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ „Պ Ր Օ Վ Օ Դ Ն Ի Կ“

(№ 3) 25—2

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская. 7.